ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան «22» օգոստոսի 2022թ.

2022 թվականի օգոստոսի 22-ին տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ ԿԽ) հերթական նիստ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին.

Զեկուցող՝ Գ. Շախբազյան

3. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն հավանություն տալու մասին» ՔՏՀԱ տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագծին.

4. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն.

Զեկուցող՝ Գ. Շախբազյան

5. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի հաստատում.

Զեկուցող՝ Որակի ապահովման վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող՝ Ֆ. Այվազյան

Նիստին մասնակցել են՝

Ա. Փամբուխչյան - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)

Գ. Սանոսյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաբայան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Դ. Սողոմոնյան	- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Նիստին չի մասնակցել Կադաստրի կոմիտեի ղեկավար Ս. Թովմասյանը:

Նիստը նախագահողը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց Օրակարգը: ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանը նշեց, որ Օրակարգի 4-րդ հարցի հետ կապված խնդիրը աշխատանքային կարգով լուծվել է, և առաջարկեց տվյալ հարցը Օրակարգից հանել:

Նիստը նախագահողը ներկայացրեց Օրակարգի 1-ին հարցը և խոսքը տվեց ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Սուրեն Մինասյանին: Վերջինս ներկայացրեց իր ինքնակենսագրականը կրթության և աշխատանքային գործունեության վերաբերյալ: Կառավարման խորհրդի անդամները ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածուին հարցեր տվեցին, որից հետո հարցը դրվեց քվեարկության:

Օրակարգի 1-ին հարցին ԿԽ նիստին մասնակից բոլոր 11 անդամները կողմ քվեարկեցին:

Գ. Շախբազյանի կողմից ներկայացվեց Օրակարգի 2-րդ հարցը, որից հետո այն դրվեց քվեարկության:

Օրակարգի 2-րդ հարցին ԿԽ նիստին մասնակից բոլոր 11 անդամները կողմ քվեարկեցին:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Հովհաննիսյանն առաջարկեց Օրակարգից հանել 3-րդ հարցը, քանի որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի բյուջեն կուտակային է, և յուրաքանչյուր եռամսյակում չօգտագործված

ֆինանսական միջոցները մեխանիկորեն փոխանցվում են հաջորդ եռամսյակ: Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Ա. Ասոյանը նշեց, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու մասին» Կառավարման խորհրդի որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է տեսչական մարմինների կատարողականների գնահատման հետ, և մյուս տեսչական մարմինների կառավարման խորհուրդների կողմից նշված որոշման նախագիծն արդեն ընդունվել է: Միաժամանակ, Ա. Ասոյանը նշեց, որ ներկայացված նախագծում կան եզրույթային անճշտություններ և առաջարկեց, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ աշխատանքային կարգով քննարկումից հետո ներկայացված նախագիծը խմբագրել:

Օրակարգի 3-րդ հարցին ԿԽ նիստին մասնակից բոլոր 11 անդամները կողմ քվեարկեցին:

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Ֆ. Այվազյանը ներկայացրեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագիծը:

Օրակարգի 5-րդ հարցին ԿԽ նիստին մասնակից բոլոր 11 անդամները կողմ քվեարկեցին:

ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարը հարց բարձրացրեց առ այն, որ Վարչապետի՝ N 02/51.2/26790-2022 հանձնարարականի համաձայն պետք է ստուգում իրականացվի հրագործական արտադրատեսակների/ապրանքների ՀՀ ներմուծման, վաճառքի, արտադրության և պահեստավորման գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ, որոնց քանակով պայմանավորված հնարավոր չէ ամբողջությամբ իրականացնել ՔՏՀԱ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները:

Ա. Ասոյանը նշեց, որ քանի որ ՔՏՀԱ տեսչական մարմինը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավասություն չունի, ուստի առաջարկում է հարցում ուղարկել ՊԵԿ՝ վերը նշված անձանց վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար, մասնավորապես՝ փաստացի գործունեության հասցեներ, արտադրատեսակների/ապրանքների քանակ, տեսակ, որից հետո արդեն պարզ կլինի, թե, ըստ վտանգավորության աստիճանի, որ օբյեկտներն է անհրաժեշտ ստուգել առաջին հերթին:

Կառավարման խորհրդի անդամների կողմից ընդունվեց ի գիտություն այն փաստը, որ Վարչապետի՝ վերը նշված հանձնարարականի կատարմամբ պայմանավորված՝ հնարավոր է ՔՏՀԱ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված մի շարք ստուգումներ չիրականացվեն:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին.

3. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն հավանություն տալու մասին» ՔՏՀԱ տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագծին.

4. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագիծը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Ի. Սնգրյան**